

ԵՒՍԵՐԻՈՍԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵԼԵՑԻՈՅ

Ի Հարս եկեղեցւոյ ոչ միայն սրբութիւն և առաքինութիւն է՝ որ յարգարէ զնոսա ախոյեանս կրօնիցս ճշմարտութեան, այլ և գիտութիւն և իմաստութիւն. զի սոքօք վերջնութեալ բազում այն է զի զպարտութիւն խոստովանէր հեթանոսականն ամբարտաւան ճոռմաբանութիւն, և օրինակօք սրբութեան և առաքինութեան պապանձեալ կարկէր: Այլ դուն ուրեք է տեսանել յընթացս պատմութեան աշխարհիս երկրորմբ միանգամայն ձգրիւք ճոխացեալս, որոց առաքինութիւն ընդաբոյս և իմաստութիւն հանճարոյ աստուածատուր 'ի միասին խառնեալ յարուցեալ իցեն զչքնաղն զայն արարած, որ 'ի զարմացումն անշուշտ կըրթիցէ զաշխարհ, եթէ էր երբեք տեսանել այսպիսիս ոմանս վերաբուսեալս 'ի խոպանութենէ անապատաց և 'ի միայնարանաց, այլ շատք ևս անդրստին 'ի հեթանոսակրօն պաշտամանց դարձեալ 'ի քրիստոնէութիւն՝ զնոյն ուսումն վարէին հանգոյն հարցն իւրեանց, և 'ի նոցին քուրայս հալոցաց ընտրեալ և ուսեալ՝ լինէին ախոյեանք քրիստոնէութեան, Զի և նոյն ինքն անաստուած կրօնիցն պաշտօնեայք՝ ոչ ինչ կասկածէին առնուլ յիւրեանց զպրոցս մանկունս քրիստոնէից, և հրօշանդել զնոսա. զի ահա ամենայն ուրեք երևին քրիստոնէայք յԱղէքսանդրիս և յԵրեսիս և այլուր, արքա և նուանիք կրկին տեսակօք իմաստից՝ քրիստոսականօքս և արտաքնովքն:

Այլ ոչ ամենեքեան սոքա զնոյն օրինակ գիտութեան բերէին յինքեանս. զի էր՝ որոյ կէտ նպատակի էր ուսանել միայն զքրիստոսական կրօնիցս սահման, և էր՝ որ հանդերձեալ էր 'ի պայքար իմաստասիրութեան միցել

ընդ նոսին իսկ ընդ հեթանոսաց վարդապետս. և առ այս չէր շատ զաւետարանականն առնուլ յինքն վարդապետութիւն, այլ և արտաքնոցն իմաստասիրութեան և աստուածաբանութեան լինել հասու, և խելամուտ պէսպէս դրութեանց նոցա և աղանդոց լինել, թէ ուստի առեալ իցեն սկիզբն: Զայս ուսումն տեսանեմք լիով և յեկեղեցւոյ Գրիստոսի, ուր ծանօթ էին բազմաց և հովերական և պղատոնական կարծիք ամենայն, և նոցին թիւր և սնտոի դըրութիւնք, Եւ ահա այս զպրոց էր՝ ուր ուսան բազմադոյնք 'ի Հարց եկեղեցւոյ, յորոց կէսք թիւրեալ 'ի սուրբ շաւղացն՝ ոչ ևս կացին մնացին 'ի թիւս Հարց, այլ կցկցուն ստայոյք վարդապետութեամբն եղեն հարք և գաւաթ մալար աղանդոց, և հերձան 'ի մարմնոյն Գրիստոսի. և որպէս ասէ ոմն 'ի յետնոց՝ եղեն երր և որդն փտութեան. իսկ այլք հաստատեալ յանշարժ վէմն կրօնից՝ կացին ախոյեանք հաւատոցս՝ բանիք և գրովք: Այլ քանզի և նոքա մարդք էին իբրև զմեզ զգածեալ մարմնով և ախտիւք, ոչ միապէս կացին անդեղևուն յիւրեանց հիման վերայ. է՝ զի մարմնաւոր ինչ փառաց սէր, կամ ոգի ընդգիմութեան և հակառակութեան, է՝ զի ամբարտաւանութիւն կենացս թիւրեցիկն զմանս յուղիղ պողոտայէն, կամ փոքու իւրք ստուերաւ անուղղայ գնացից՝ նսեմացուցին զվարս նոցա, և գողացան 'ի նոցանէ զանուն սրբութեան: Այլ ոչ եթէ այսու արդիւնք հանճարոյ նոցա նսեմացաւ ինչ և ալօտացաւ. զի եթէ ոչ սրբութեամբ՝ զոնեայ մեծամեծ արդասեօք իմաստից, և սպասաւորութեամբ՝ զոր հարին 'ի փառս եկեղեցւոյ, զովին և կարդին 'ի շարս Հարց եկեղեցականաց:

ի սոցիւնց աստի անշուշտ իցէ հա-
մարել և զէւսերիս կեսարայի, որ բա-
զում երկասիրութեամբք եկաց ակա-
նաւոր այր, գործեաց բազում ինչ և
զրեաց բազմազոյն յօգուտ և ի փառս
եկեղեցւոյ. զորոյ զհմտադոյնն յերկա-
սիրութեանց անհաւաստի տամբ ի լոյս
ի վայելումն եկեղեցասէր հմտից և
զիտնոց, են սորա և բազում այլ մա-
տեանք, բաց յեկեղեցական պատմու-
թենէ աստի, որք յաւելուն փառս ա-
նուան իւրոյ: Եւանթ իսկ է ումենե-
ցուն հրատարակեալն առ ի մէջ հր-
բեմն փրոնիկոնն անուանեալ մատեան
ի կարգս հնոց ժամանակագրաց, հայ
թարգմանութեամբ նախնեաց մերոց և
յեղեալ ի լատին բարբառ ի վաստա-
կասէր առնէ Միտրաոնութեանս, որոյ
յիշատակ արդէն անմահացեալ է յող-
գիս բազմամթեր երկասիրութեամբք,
Հ. Մկրտիչ վ. ասեմ Ագգերեան.
և սոյն այս գործ մատենագրիս ոչ սա-
կաւ լոյս ծագեաց յանցս հնոց պատ-
մութեանց: Ոչ զերկրորդական ունին
զտեղի ի մատեանս նորա և զոր աշ-
խատասիրեաց զնորոց կաակարանաց,
որ կոչին Պատրաստութիւն աւետա-
րանի և Յոյցք աւետարանակոնք, մի
քան զմի պատուականագոյն մատենանք
կարեւորք ի դիտութիւն ճամբորտ կրօ-
նիցս միւրոց. յորոց ի միումն առաջի
առնէ մատենագիրս զմուտս փրիս-
տոնէութեան յաշխարհ և զյոռաշա-
նալ քարոզութեան աւետարանին, և
ի միւսումն եթէ զիարդ հրէսութիւնն
պարտաւոր կայուցանէ զանձն մեր.
ժեղով զքրիստոսականս կրօնք, և զի
քրիստոնէութիւն ոչ այլ ինչ է՝ բայց
լրումն հրէականին, Այլ քան զայս ե-
րեսին գրեանս նորա՝ ամենայնիւ ա-
ռաւելեալ գտանի առաջիկայս այս գործ
եկեղեցականս պատմութեան, յորում
անհամեմատ ոճով վերագոյն զինքն
ցուցանէ այս շատգէտ հմտութեամբն
և յօրինեալ կարգք. ուր երևին մեկին
և կարգաւ ամենայն մատենագրաց յի-
շատակութիւնք, արեւելեայց և արեւմ-
տեայց՝ ի դիւանացն եղեւսիոյ մինչև

ցմատենագրարանս Հռոմայ. Անդանոր
Յովսեփոս, փիլոն և Ալիքիկանոս ստէպ-
անին ի մէջ բանիւք իւրեանց և նկա-
րագրք. մի ըստ միովէ նշանակին իւ-
րաքանչիւր առն երկք և գործք, և անցք
պատմութեանց իւրաքանչիւր. անդ
հանդէս նահատակութեան վկայից և
տանջանարանք նոցա և արիական բանք.
կարգ եպիսկոպոսաց եկեղեցեաց և քա-
հանայապետաց Հռոմայ. և համայն ա-
սել. տեսանիցես անդէն ի նմին մատե-
նի զամենայն ինչ որ միանգամ հային
ի կարգս և ի դէպս առաջին երեցուն
դարոց փրիստոնէութեան. և մար-
թիլի իսկ ասել ընդ ումենն ի ժամա-
նակացաց մերոց՝ եթէ առանց մատե-
նիս այսորիկ կոյր լինէալ յեկեղեցու-
կան պատմութեանս առաջնոց դարացւոյ
Արդ մատեան մի այսպիսի՝ որ յամե-
նայն լեզուս գողցես հանեալ է, գոյր և
անդօտին յաւուրց սրբոյն Մեսրոպայ
թարգմանեալ ի հայ նորին իսկ հրա-
մանաւ, որպէս երաշխաւորէ մեզ զայս
երանելին Մովսէս քերթողահայրն (խոր-
բ. ժ.) «Վկայ քեզ ի մօտոյ երաշխա-
ւորեացէ եկլեւսիաստէ զիրք եւսերի կե-
սարացւոյ, զորս ետ թարգմանիւ երա-
նելի վարդապետն Մաշտոց ի հայ լե-
զու »: Այլ քանդի յիշատակեալ թարգ-
մանութիւն կարծի յառաջ քան զգիւտ
հայ դրոյն, վասն որոյ թուեցաւ ոճոյն
յասորւոյն լեալ և ոչ ի յոյն բնագրէն
և զայս հաւաստէ մեզ յայտնապէս ե-
զոր սյծմ ունիւր ի ձեռին հին թարգ-
մանութիւնն. զի ոճ շարագրութեանն,
և յանուանս տեղեան և մարդոց՝ ձայ-
նաւորաց փոխանակութիւն՝ զոչն վկա-
յեն. այլ և յստակ շարագրութեանն
հանգամանք կարծեցուցանեն արդարեւ
լինել յարդիւնական գրչէ միոյ ի թարգ-
մանցաց դասուն, Այլ որպէս ամենայն
մատենից և ձեռագրաց մերոց, սոյն
պէս և սմին այսմիկ գէպ եղև բազում
ինչ կրել ի յեղափոխ ժամանակէն. և
տգիտութեամբ գրչագիր օրինակողաց
բազում ուրիւր մալոյլ առեալ են քանքն
և խրթնացեալ մինչև անիմանալի լի-
նել շարագրութեանն և իմաստից:

վասն որոյ անմարթ էր զայնպիսի մա-
տեան հրաշարի և շոյեկան ուսումնա-
սիրաց՝ յայնպիսում պայմանի աղաւա-
ղութեան հրատարակել 'ի լոյս, որով
ոչ ինչ կամ սակաւ յոյժ օգուտ գործէր
ընթերցանելեացն :

Առ այս հոգ յանձին տարեալ փու-
թով յարդարէր զայն բազում մասամբ
նորոգ թարգմանելով 'ի յունէն վ. Հ.
Աբրահամ վարդ. ճարեան 'ի Միտ-
բանութենէ ուխտիս. միայն ուր ուրեք
չէր ինչ կարի խոտորեալ հին թարգ-
մանութիւնն մեր 'ի բնագրին իմաս-
տից՝ պահեալ անդանօր զչնորհ և զոճ
և զբառս նախնեացն յիւրում թարգ-
մանութեանն. զի որոց 'ի գիտութենէ
մատենին ունին օգտել շահեսցին 'ի
նորոյն, որ եղաւ 'ի բուն գիրս. իսկ
զհին թարգմանութիւնն կարգեցաք 'ի
ստորե մանրագիր, զի հետախոյզ հա-
յասէրք առցեն և զճաշակ այնր. էին
և 'ի մեր հին օրինակս ուրեք ուրեք
պակաս էլք, թողար և զոյն այնպէս՝
նշանակեալ միայն 'ի ժանօթութեան.
զի թէպէտ գոյին բազումք 'ի գլխոց
մատենին յայլ և այլ ցրուեալ ճառքն
տիրս և 'ի հաւաքմունս նախնեաց, սո-
կայն չարարաք ինչ փոյթ զայնոսն,
այլ հետեցեաք միայն միոյ օրինակի՝
որ գտանէր 'ի ձեռագիրս մեր. մինչև
ժամանակաւ ընտրելագոյն ևս ձեռա-
գրի պատահեալ մարթասցուք մեք,
կամ եթէ և այլք, ուղղագոյն ընթեր-
ցուած ընծայել բանասիրաց՝ ըստ
թարգմանաց հարազատ իմաստից :

Այս են գլխաւորը յերկասիրութեանց

Եւսեբեայ, զոր այժմ ունիմք 'ի ձեռին.
այլ են և այլ մանր մանր գրեան և
թուղթք՝ զորոց աւելորդ համարիմք եր-
կարել առ տեղեաւս Այսոքիկ զորս
գրեացն նա առ կենդանեաւ իւրով որ
փառաւորեն զանուն իւր. այլ ոչ նոյն-
պէս և զոր գործեացն. զի որչափ հրմ-
տութեամբն պանծալի եկաց նա, նոյն-
չափ և յիրս և 'ի պայմանս կենացն
թիւրեցաւ. Յազմուկս Արիանոսացն ոչ
գիտաց ունել զանձն յուղիղ չափոս,
այլ կամ փառասիրութե անտիւ, կամ
չողովմանք՝ զոր լիով տեսանիցես 'ի վարս
կոստանդիանու՝ առ նոյն կայսր բար-
բառեալ, կամ եկաց միշտ 'ի թիկունս
ոչ այնչափ աղանդոյն՝ որչափ աղանդա-
ւորացն. զի երեկ եթէ և 'ի նիկիական
ժողովի ընկալաւ զբառդ Համագոյ, թէ-
պէտ և 'ի գիրս յայսմիկ և այլուք ոչ
ուղղապէս բարբառի զՀամագոյակցու-
թենէ Որդւոյ ընդ Հօր. Համօրէն յա-
մենայն չփոթս երեկ սա յառաջագէմ,
և 'ի ժողովս իսկ այսր և անգր և 'ի ժո-
ղովակս՝ զանձն 'ի ներքս մղէ. տեսանի
'ի ժողովն Անտիոքայ (330), ուր խն-
դիրք և յուզմունք լինին 'ի պատճառս
ընկենլոյ զԵւստատիոս յաթոռոյ, երեկ
'ի Տիւրոս (335) մարտեւ ընդդէմ
սրբայն Աթանասայ. Այսչափ նշանաւոր
անցք կենաց նորա են մեզ ժանօթք,
իսկ այլ ոչ ինչ յիւրոց կենացն. այլ զի
և զկնի հայաժանացն Գաղեթիոսի կայ-
սեր ընտրեցաւ նա եպիսկոպոս Կեսա-
րիոյ Պաղեստինացւոց յամի 314, այլ
եթէ զինչ գործեաց յայնժամ՝ անգի-
տանալք :

ՍՄԱՆԻՔ ԾԱՂԿԻՄՈՒՄ

Յանկիչատակ ժամանակաց սկսեալ
մինչև մեր օրերը, միշտ իմաստնոց յար-
գի և ընդունելի եղած է կենդանեաց և
անշունչ արարածոց բերանը խօսք գնել,
և անոնց օրինակովը՝ մարդկային տկա-

րութիւնները և պակասութիւնները
ուզել. որով գրեթէ ամեն հին և նոր
ազգաց մէջ կը գտնուին Առակներ, զա-
նոնք կարգաւորող և կարգաւորեալ ու
ճով գրի առնողներն ալ ըսուեր են Ա-